

Ս. ԳՐԳԻ ՀԱՄԱՐԱՐԲԱՌԸ.

Անցեալ 1895 թ. ին Երուսաղէմի «Սըր-ըոց Եակովբեանց Առաքելական Աթոռոյ» տը-պարանից լոյս տեսաւ «Համաքարքառ Հին եւ Նոր Կտակարանաց — աշխատասիրութիւն թա-ղէոս վարդապետի Աստուածատրեան Արապ-կերցոյ, ի Միաքանութենէ Սըրըոց Եակով-բեանց»: 1573 ընդարձակ երեսներէն՝ շատ մաքուր տպագրուած այս հսկայական մեծա-յարգ աշխատութիւնը մի հայ, ոչ Մխիթար-եան, վարդապետի գործ է ուրեմն, ինքնու-րոյն կերպիւ, առանց եւրոպական աղբիւրների օժանդակութեան գլուխ հանած, եւ դորանով իսկ առանկ գնահատելի մեզ համար: Հա-յատանեայցս վեհափառ Հայրապետի առ Յովհաննէս առագ քահանայ ուղղեալ ծար-տարահիւս ուղերձը, որ այդ քազմաւաստակ աշխատութեան ծակատը զարդարում է եւ որ մենք աւելի ընդարձակ շրջանի մատչելի դարձնելու համար մէջ ենք քերում՝ Արա-բատի սոյն համարում: որոշ տեսակէտից ուղղուած կարող ենք նկատել առհասարակ թուր հայ հոգեւորականներին: Թէ որքան պակաս է մեր մէջ ս. Գրքի մօտիկ ծանօ-թութիւնը, չասենք ուսումնասիրութիւնը՝ յայտնի է. իսկ թէ ինչ չափով եւ ինչ կող-մերով պղպխի ծանօթութեան նպատեւկա-րող է Համաքարքառը, իւր շմուտ «տե-սութեամբ» քազմակողմանի կերպով պարզա-բանել է պ. թորոս Զուղայեցին: Մեզ մնում է միայն ի սրտէ ցանկալ, որ ինչքան կա-րելի է շատ գտնուին հայ հոգեւորականներ, որոնք այդ քաջատրութիւնը ուշի ուշով կար-դալով եւ վեհափառ Հայրապետի ոգեւորիչ յորդորից քաջաւերուած՝ աշխատեն մի կերպ ծնոք քերել ս. Գրքի Համաքարքառը եւ նո-րա օժանդակութեամբ իրենց յանձնուած հօտին ի մխիթարութիւն եւ ի հոգեւորն շի-նութիւն աւելի եւ աւելի մեծ չափով նիւթ առնեն աստուածային ճշմարտութեան անըս-պառ աղբիւրից: Համաքարքառի վերջում տը-պագրուած քաժանորդների ցուցակը 79 թ. ի

է միայն հասնում մինչդեռ նորա վերայ ե-ղած մեծ ծախքը ծածկելու եւ նորան լոյս ընծայող Միաքանութեան աշխատանքը մա-սամբ գոնէ վարձատրելու համար շատ ա-ւելի քաժանորդներ եւ նուիրաբերութիւններ պէտք էին: Յայտնի է մանաւանդ, թէ ինչ-պիսի տագնապալից վիճակի մէջ է գտնու-ում՝ այժմ՝ ի շարս Տաճկաստանի Հայոց միւս վանքերի նաեւ ս. Եակովբեանց վանքը, որ տնտեսական պահպանութեան սովորական աղբիւրները մեծապէս նուազած կամ թուրո-վին սպառած են: Կարողութեան տէր անձինք գնելով կամ նուիրելով Համաքարքառի օրի-նակներ՝ կրկին օգուտ ուրեմն քերած կը լինին:

Այս գրութեան իսկական արժէքը նման-օրինակ եւրոպական ձեռնարկութեանց համե-մատութեամբ որոշելու համար երկարատեւ գործածութիւն եւ ուսումնասիրութիւն պէտք էր: Առ այժմ՝ այսքանը միայն նկատենք, որ մեզ աննպատակ եւ անյարմար են երեւում նոյն իսկ հեղինակի իւր յառաջաբանի մէջ մատնացոյց արած մի քանի կէտերը, ինչպէս օր. նոյն համարում՝ մի քանի անգամ՝ յիշուած քառը միանգամ՝ միայն նշանակելը. Աստուած եւ Տէր, Յիսուս եւ Բրիստոս քառերի ոչ ա-ռանձին առանձին, այլ միասին նշանակելը: Մյսպէս. մեզ հարկատը էր քանալ. «գի թէ-պէտեւ գիտէաք մարմնով գ. Բրիստոս, այլ արդ ոչ եւ նոյնպէս գիտեմք» նշանատը խօսքը Բ. Կորնթ. Ծ. 16: Բոլոր քառերը ճշդութեամբ չէինք յիշում: քաց արինք «մարմին» եւ «գի-տել» քառերը. երկուսն էլ քերուած են միայն նոյն համարի առաջին նախադասութեան մէջ. «Այսուհետեւ մեք ոչ զոք գիտեմք մարմնով», որի մեր փնդած խօսքին կից լինելը չկա-րողացանք յիշել. քաց արինք ապա «Բրիս-տոս» քառը, այդ եւս մոռացուած է, ոչ միայն այս, այլ նաեւ «Յիսուս Բրիստոս» խօսքի ներ-քոյ յիշատակուած մի շարք ուրիշ նախադասու-թեանց մէջ, ինչպէս յաջորդ 17, 18 եւ 19 հա-մարներում: որոնցից յետոյ միայն 20 հ. ն. է յառաջ քերած: Նոյն Բ. Կորնթ. Ծ. 16 հ. յիշուած «այսուհետեւ» քառի համար, որ Պօղոս Առա-

քեալի թղթերի մէջ անթիւ անգամ՝ կրկնուում է՝ Համաքարառից կարելի էր եզրակացնել: Թէ Մատթ. Ժ. 20 հ.ից յետոյ պլեա չի յիշուում:—Պէտք է կարծել ուրեմն: որ հեղինակը տեղ տեղ իւր աշխատութիւնը չէ լրացրել: Իսկ այնպէս շատ յիշողը քանի: Ինչպէս Աստուած, Տէր: Յիսուս: Բրիստոս միասին դնելը՝ շատ դժուարացնում է քաց անողի գործը: Գործածութեան համար գուցէ անելի նպատակայարմար լինէր նաեւ չին եւ Նոր կտակարաններն առանձին հատորներով կազմելը: Առ հասարակ պայակսի մեծ աշխատութեան մէջ թերութիւններ հարկաւ պակաս չեն լինի: Ըսյց դոցանով նորա յարգը չի ընկնում: Երանի նա այնքան շատ տարածուէր: որ մօտիկ ապագայում՝ յամախակի գործածութեան մէջ նկատուած թերութիւններից զերծ մի երկրորդ տպագրութիւն լոյս ընծայելու հարկ լինի:

ԱՌ

ՀԵՌՈՒՆԱՅԵՐԻ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ

ԽԱՅԵՐԻ ԱԻՍԿ. ԲԱՆԱՆԱՅ ԽԱՅԻԿԵԱՆ

Ի ԿԱԼԿԱԹԱ

Ար բնակեալք եւ առ նուիրական գետովն Գանգէսի, զոր Հնդկին աստուածացեալ է, գիտեն արդեօք, թէ ուստի և ո՞ւր հասեալ կաս. և յիշեն դու Հարանցդ զհին բնակատեւնդ Հայրենին, ուր գրախտին սուրբ Գեան երասիս անցանէ եւ այր գրացի էր Հին Զուգայի քաղաքն բարեշէն, բարգաւաճեալ լի ժողովրդովք և որդիքն իւր ուսմացեալ էին գրախտի կենդանարար Գետովն:

Եւ դու երբ կարգաս զՊատմագիրն Առաքէլ միթէ ցամաքեալ են ի ծերութեան քում արատաւք յաչացդ, որ չողբաս և կամ ոչ լաս ի վերայ տարագրեալ ամբխտ որդւոցն և գաղթականութեանն, որոյ ծայրն եհաս մինչ յայդ աշխարհ Հնդկաց:

Եւ գուք յիշէք քան զամեն առաւել

զնուիրական զայն Բանալին Մայր Եկեղեցւոյն Զուգայի, որ մինչ երթալին և լային ժողովուրդ, կացին առաջի դրան Ս. Աստուածածնի Եկեղեցւոյն, և քանի սրտառուչ էր այն վերջին ողբերգութեան ձայն և մնաս բարեան, զոր գոչեցին Քահանայք և որդիք Եկեղեցւոյ:

Ո՛վ Սուրբ Կոյս Տիրամայր, քեզ յանձնեմք զբանալին դրան արքայութեան Մայր Եկեղեցւոյն մերոյ, զոր թողումք արդ գոնիակ ամայի, անքահանայ և անժողովուրդ. թողումք զաւագանն որ ծնաւ զմեզ. տարաբաղդ որդիքս տարագրեմք յօտարութիւն:

Եղով այն աւուր, զի զայս ասացին և ձգեցին զբանալին ի ծոցն երասխայ. Արդ կայ և մնայ բանալին այն ի խորս գետոյն, եւ ո՞ կարէ հանել զայն:

Ա.Մ. Գու մի լինիր յուսահատ, բանալին այն՝ Սրբազան աւանդ է, գետք և ծովք աշխարհիս չկարեն պահել թագուցանել զայն: Քանզի պահապան Հրեշտակ հսկէ ի վերայ նորա աւանդապահ Կոյսն, որ բարեխօս լինի առ Արդին վասն վտարանդի որդւոց Սիօնի: ձեռն պցելութեան ի վերուստ ձգեալ ի վեր հանէ զբանալին որպէս զՅովնան ի փորոյ կիտին:

Թողումք զբանալին. զի՞նչ արարին արդեօք քո գաղթական նախնիք զայնչափ հրեշտայն Աստուածաշունչ գրչագիր մատեանս, անշուշտ բարձեալ տարան ընդ իւրեանս. զի կրօնի և Աստուածապաշտութեան գանձք էին նոքա. որպէս Խորայեւեան բնանակն, ուր երթայր զհետ իւր տանէին Քահանայք զՏապանակն հնոյ ուխտին:

Աստ գու ինձ այժմիկ, մի պահեր, ո՞վ Հայր եւ Քահանայ Տեառն, ի պատուական գանձուց անտի գոնէ մի հատ քեզ ժառանգութիւն ոչ մնաց ի նախնի Հարց և ի Պապոյ քումմէ, զոր իբրեւ զակն գոհար անգիւտ և անգին ի քեզ պահես, և գուցէ կնքեալ զայն ոչ բանաս, ոչ ընթեռնուս, ոչ երգես, ոչ օրհնես ուխտ եղեալ ընդ անձին քում: որպէս Խորայեւեան գերեվարեալ որդիքն առ Գետովն Բաբելոնի:

Եւ դու եւս արդեօք զկտակարանն Ս. առեալ երթաս յեղրս Գանգէսի, կախես զայն յառեւեակ և դու նստիս առ հովանեօք: Թէ ասեն քեզ որդիքն Հնդկաց, ո՞ն Թրհնեցէք մեզ յօրհնութենէն Սիօնի, և դու առես. ոչ, ոչ երգեմ եւ զօրհնութիւն յերկիր օտար՝ մինչեւ զարձուցէ զիս Տէր Աստուած